ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2020թ.-ի ապրիլի 27-ի թիվ 11/02Լ-Հ որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի կողմից հաստատված՝ ռիսկերի վրա հիմնված Բանկի Ներքին աուդիտի 2019թ. Աշխատանքային ծրագրի համաձայն, Ներքին աուդիտի կողմից կատարված ստուգումների շրջանակում իրականացվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին Բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ գնահատումներ:

Ստուգումների նպատակն է եղել գնահատել Բանկի ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը, որի նպատակով ստուգվել են Բանկի ներքին հսկողության գործուն համակարգի ներդրման և շարունակական կատարելագործման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Կատարված աշխատանքների հիմնական նպատակն է եղել բավարար հիմքերի ստեղծումը, որոնք հնարավորություն են ընձեռում արժանահավատ կերպով գնահատել Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և կազմել համապատասխան եզրակացություն, համաձայն որի Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության արդյունավետ և գործուն համակարգի շարունակական զարգացման գործընթացին:

Հիմք ընդունելով վերը նշված աշխատանքների արդյունքները՝ Ներքին աուդիտի կարծիքով 2019թ. գործունեության ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի վարչության պետ/
Գլխավոր աուդիտոր՝ **Հովհաննես Հովհաննիսյան**